ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Համագործակցային դասը որպես արդյունավետ ուսուցման միջոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Ներսիսյան

ԿԱՏԱՐՈՂ՝ Ռ.Պետրոսյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

1. Ներածություն……..1
2. Համագործակցային դասը որպես արդյունավետ ուսուցման միջոց…3
3. Համագործակցային ուսուցման մեթոդներ……4
4. Հետազոտական աշխատանքի իրագործում……...9
5. Եզրակացություն……12
6. Գրականություն.....14

Ներածություն

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը

4. Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը։
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը։

Հետազոտական աշխատանքում փորձում ենք ներկայացնել ժամանակակից մեթոդների արդյունավետությունը: Մեր նպատակն է հետազոտել ժամանակակից մանկավարժության մեթոդների կիրառումն ու արդյունավետությունը դասարանում.

Մեր նպատակին հասնելու համար մենք սահմանում ենք հետևյալ խնդիրները. Համագործակցային ուսուցմամբ անցկացնել երեք դասաժամ.

1. Ուսումնասիրել աշակերտների ներգրավվածությունն ու ակտիվությունը դասին.
2. Պարզել,արդյոք,համագործակցային դասը արդյունավետ ազդեցություն ունեցավ թույլ,և ոչ ներգրավված աշակերտների մասնակցությունը դասապրոցեսին .
3. Դիտարկել համագործակցայինն ուսուցմամբ՝ խմբային մեթոդով դասերը՝նշելով առավելություններն ու թերությունները:Ակնկալիքները այս հետազոտության արդյունքում մեծ են և կաշխատենք հետազոտման միջոցով վեր հանել նրա դրական կողմերը և հասնել վերջնարդյունքներին:

Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը՝ նպաստելով սովորողների համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Խմբային աշխատանքները աշակերտի մոտ զարգացնում են կարևոր մարդկային հատկանիշներ՝ համագործակցել, լսել և հարգել դիմացինի կարծիքը, պատասխանատվություն կրել խմբի համար: Նման աշխատանքների մասին կարծիքս դրական է: Նույնիսկ ամենաթույլ աշակերտը թեկուզ փոքր, բայց որոշակի ներդրում կունենա տրված առաջադրանքը կատարելու համար:

Գլուխ 1.Համագործակցային դասը որպես արդյունավետ ուսուցման միջոց

Հետազոտական աշխատանքն իրականացնելու համար ընտրել եմ 5-րդ դասարանի մայրենիի 3 դասաժամ. <<Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը>> <<Թեմայի ամփոփում>>:

Դասժամերը կանցկացվեն համագործակցային ուսուցմամբ:

- Աշակերտները սովորում են միմյանցից, ինչպես նաև սովորում են սովորել:
- Հանդուրժողականության, հաղորդակցական և շփման հմտություններ են ձևավորում և զարգացնում:
- Աշակերտի պատասխանատվության զգացումն է զարգանում , նա պատասխանատու է ամբողջ խմբի կատարած աշխատանքի համար:
- Ինքնադրսևորման և ինքնարտահայտման հնարավորություններ են ստեղծվում:
- Ճիշտ ձևակերպված, հստակ և դիպուկ խոսքի ձևավորումն է խթանում, քանի որ իր մտքերն ընկերների հաղորդելու համարա պիտի աշխատի դրանք ձևակերպել պարզ և հասկանալի:

Այս սկզբունքի համաձայն սովորողի և ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենք ևս սովորողնոր են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար:

Համգործակցային ուսուցումը ենթադրում է ուսուցչի ակտիվություն, ճկունութույուն : Նա պետք է կարողանա ուղղորդել դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և ստողծագործ միջավայր: Այս ուսուցման ընթացքում ուսուցրչը ներկայանում է որպես դիտարկող և աջակցող, ում հնարավրություն է ընձեռնվում ձևավորել սովորողների խմբերն այնպես, որ նրանց տեղաբաշխումը ճիշտ և նպատակային լինի, որպեսզի վերջնարդյունքում նպաստի սովորողների սոցիալական հմտությունների զարգացմանը:

Հետազոտության միջոցով ցանկանում եմ աշակերտների մոտ զարգացնել ապրումակցելու, աջակցելու , փոխըմբռնելու կարողությունը: Մենք ուսումնասիրեցինք համագործակցային ուսուցման արդյունաբերությունը, որի հիմքում ընկած են հիմնականում 3 տեսություններ՝ սոցիալական փոխկապավածություն, ճանաչողական զարգացման, վարքագծային ուսումնառություն:

Գլուխ 2.Համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

1. Աշակերտների թիմային առաջադիմություն

2. Խճանկար

3. Շրջագայություն պատկերասրահում

4. Երեք բանալի և մեկ կողպեք

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը , որ գնահատվում է աշակերտի առաջընացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և առանձին աշակերտների, և խմբերին:

Խճանկար(Ջիգսո,Jigsaw): Խճանկարը համգործակցային ուսուցման մեթոդ է:Այն մշակվել է փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդի որի

կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում դասընկերներին: Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ սովորողները խորամուխ ոն լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու , քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու , ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով:Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում ,որոնք բավականին ծավալուն են : Այս մեթոդով աշխատելիս ձևավորվում է ընտրություն կատարելու , գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն , ինչպես նաև համագործակցելու , իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման ՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանի գրած շարադրանք:

Խմբային հետազոտության մեթոդ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և

համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Խմբային հետազոտություն կիրառող ուսուցիչը կարող է հետապնդել 3 փոխ կապակցված նպատակ.

1. խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները
2. պայմաններ ստեղծել, որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնեն ուսումնական նյութի բովանդակությունը,

սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում:Այսպիսով՝ այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնականնյութի բովանդակությունը, զարգանում են իրենց հետազոտելու և համագործակցելու հմտությունները:

Ընթացքը

Քայլ 1. Խմբերի ձևավորումը և թեմայի ընտրությունը

Խմբերի ձևավորման և թեմայի ընտրության հերթականությունը կարելի է փոխել: Որոշ դեպքերում ուսուցիչը կարող է ընտրել թեմաներ, ապա նոր, ըստ աշակերտների հետաքրքրության, ձևավորել խմբեր: Այլընտրանքն այն է, երբ նախ ձևավորում են խմբերը, ապա սովորողներն իրենք են ընտրում հետազոտության թեման: Այս տարբերակը նրանց հնարավորություն է տալիս զարգացնելու դասընկերների հետ բանակցելու և փոխզիջումների գնալու հմտությունները: Երբ խմբերը ձևավորված են ու հետազոտության թեմաներն ընտրված, անհրաժեշտ է անցկացնել թիմ (խումբ) ձևավորող վարժություն, որոնք կարևոր միջոց են համագործակցային ուսուցումը արդյունավետ դարձնելու ճանապարհին:

Ստորև ներկայացնենք թիմ ձևավորող վարժությունների օրինակներ:

Վարժություն Նկարագրություն

Սիրած զբաղմունք - Խմբի անդամները միմյանց հարցնում են իրենց սիրած երաժշտության, սպորտի, նախասիրության մասին:

Կենսագրություն - Խմբի անդամները միմյանց հարցնում են կենսագրական տվյալների մասին:

Քայլ 2. Խմբային աշխատանքի պլանավորումը

Աշակերտները որոշում են իրենց աշխատանքի բովանդակային ընդգրկումը, նախանշում են ռեսուրսները, մշակում գործողությունների պլան, որոշում խմբի անդամների պարտականությունները: Եթե խմբի բոլոր անդամներն ուսումնասիրում են ամբողջական թեման, ապա պարտականությունների բաժանումը հեշտ է կատարել՝ ընդամենը որոշելով, թե ով ինչ ռեսուրսներ է ուսումնասիրելու: Իսկ երբ խումբը բաժանվում է ենթախմբերի և յուրաքանչյուր ենթախումբ ուսումնասիրում է որևէ ենթաթեմա, ապա անհրաժեշտ է նաև որոշել, թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքները, ով է պատրաստելու թեմայի ամբողջական ներկայացումը:

Քայլ 3. Հետազոտության իրականացումը

Սա խմբային հետազոտության ամենակարևոր փուլն է: Այս փուլում են աշակերտները փնտրում ռեսուրսներ, հավաքում տեղեկատվություն: Այս ընթացքում ուսուցիչը, պարբերաբար շրջելով (սահելով) խմբերում, պետք է պարզի, թե ինչ են անում աշակերտները, ինչ աջակցության կարիք ունեն:

Քայլ 4. Արդյունքների ամփոփում և ներկայացման նախապատրաստում

Աշակերտները այս փուլում վերլուծում և գնահատում են իրենց ձեռքի տակ եղած տեղեկատվությունը, իսկ ուսուցիչը շրջում է խմբերում և աջակցում նրանց: Առաջին հերթին անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել հետազոտվող թեմայի վրա, թույլ չտալ շեղվել թեմայից: Ոչ պակաս արդյունավետ է նաև աջակցության ամենահումանիստական ձևը՝ աջակցել խրախուսելով: Կարելի է նաև խորհուրդ տալ աշակերտներին իրենց ստացած արդյունքները ներկայացնելիս պարբերաբար օգտվել աղյուսակներից, դիագրամներից և գրաֆիկներից:

Քայլ 5. Հետազոտության արդյունքների ներկայացում

Այս փուլն ունի երկու հիմնական նպատակ՝

- լուսաբանել կատարված հետազոտությունը,

- և կարողանալ հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնել այն:

Հետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր, բանավոր-գրավոր, պատկերային ձևով (օրինակ՝ համակարգչային մշակմամբ, ցուցապաստառներով, աբստրակտ նկարով կամ կոլաժով): Նշենք, որ նախընտրելի է բազմազան ձևերի օգտագործումը:

Խմբային հետազոտության գնահատումը

Խմբային հետազոտության գնահատումը պետք է իրականացվի այս մեթոդի երեք նպատակների հասանելիության ստուգման առումով՝

- հետազոտական հմտությունների,

- խմբային (համագործակցային) հմտությունների,

- բովանդակության յուրացման:

Բովանդակության յուրացման գնահատումը

Ավանդական մեթոդներով աշխատող ուսուցիչների հիմնական գործունեությունը սովորողների յուրացրած նյութի բովանդակության յուրացման աստիճանի ստուգումն ու գնահատումն է: Համագործակցային եղանակով աշխատող ուսուցչի համար նույնպես շատ կարևոր է պարզել, թե որքանով են աշակերտները յուրացրել իրենց հետազոտած նյութը: Ուսուցիչը դա կարող է գնահատել՝ հիմնվելով աշակերտների ներկայացման վրա: Կարելի է նաև նրանց հարցաթերթիկ տալ, հանձնարարել թեմատիկ (ստուգողական) աշխատանք, ռեֆերատ կամ շարադրություն: Ստորև ներկայացվող գնահատման սանդղակը (ռուբրիկ) կարելի է օգտագործել համագործակցային ուսուցման բոլոր մեթոդները կիրառելիս:

Գլուխ 3. **Հետազոտական աշխատանքի իրագործումը**

Հետազոտական աշխատանքս իրագործել եմ 5-րդ դասարանում: Դասարանում սովորում են 25 աշակերտ՝ 15 աղջիկ և 10 տղա, որոնցից 2-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ: Սակայն հետազոտական աշխատանքս իրականացրել եմ թիրախային 5 աշակերտների հետ:

Ընտրել եմ մայրենի առարկայից 3 դասաժամ: Նպատակահարմար եմ գտել դասերը համատեղելու, որպեսզի հասնեմ իմ նպատակներին և վերջնարդյունքներին: Դասի թեմաներն են՝ <<Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը>>,<<Թեմայի ամփոփում>>:

Առաջին դասի թեման է <<Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը>> հեքիաթը : Դասի նպատակն է խմբային աշխատանքի միջոցով գիտելիքների ձեռքբերումը.

- Ուսումնասիրել հեքիաթի բովանդակությունը
- Հասկանալ հեքիաթի փոխաբերական իմաստը
- Հեքիաթը համեմատել իրական կյանքում կատարվող դեպքերի հետ

Վերջնարդյունքները պիտի լինեն աշակերտների կողմից հեքիաթի ինքնուրույն ուսումնասիրություն: Աշակերտները կկարողանան .

ա . ներկայացնել հեքիաթի խրատական մասը

բ . թվարկել մարդկային արժանիքներ

գ . արժևորել մարդակյին փոխհարաբերություններ

դ . ընկալել հեքիաթի հիմնական գաղափարը

Առաջին դասի համար առաջարկում եմ խմբերին մտածել ցուցապաստառին գրված <<Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը>> նախադասության մասին: Ժամանակ եմ տալիս մտածելու համար և անցնում հաջորդ քայլին , որը մտքերի փոխանակության փուլն է:

Նոր նյութին ծանոթանալուց հետո կանցկացնեմ զույգերով հարցադրում և ուշադրությունը կենտրոնացնելու, և պատասխանատվության զգացում ունենալու համար: Պատասխաներից և ակտիվ մասնակցությունից պարզ կդառնա նոր նյութի

ընկալման մակարդակը: Այստեղ կիրառում եմ <<Կանխագուշակման աղյուսակ>>հնարը:

Ի՞նչ է լինելու	Ի՞նչ փաստեր կան	Ի՞նչ եղավ

Մաս-մաս կարդալ և գրառումներ անել համապատասխան սյունակներում: Մինչև պատմվածքի ավարտը աշակերտը կունենա ամբողջ հեքիաթի սեղմագիրը:

Այնուհետև կհանձնարարեմ տանը փնտրել , գտնել հանձնարարված նյութի վերաբերյալ տարբեր տեղեկություններ խմբային աշխատանքը ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնելու համար:

2-րդ դասաժամին դասարանը բաժանվելու է 4-5 խմբի: Խմբերի բաժանումը կատարվելու է խառը եղանակով՝ ակտիվ և պասիվ աշակերտներին ներգրավելով 4-5 խմբում էլ: Նյութի բաժանումը կատարվելու է հետևյալ կերպ. Թղթի վրա կգրվի հեքիաթի վերագիրը և ամեն անդամի համար կմշակվի հատուկ առաջադրանք: Խմբերը կաշխատեն իրենց հանձնարարված թեմայի շուրջ: Խմբի յուրաքանչյուր անդամ ունի իր համար հատուկ առաջադրանք, քանի որ դասարանում ունենք նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2 աշակերտ՝ նրանց համար ունենք հատուկ առաջադրանք ՝ տեքստից դուրս գրել կարմիր գրված և ձայնավորով սկսվող բառեր, 2-րդը բովանդակությունը պատմի , 3-րդը համեմատի այլ աշխատանքի հետ, 4-րդը փոխաբերական իմաստները դուրս հանի և կազմի նախադասություն: Т- աձև աղյուսակով համեմատել և բնութագրել երկու եղբայրներին:

Մեծ եղբայր	Փոքր եղբայր

Խմբերից յուրաքանչյուրը կներկայացնի իրեն հանձնարարված նյութը: Խմբերն ուշադիր կլսեն միմյանց և կյուրացնեն թեմաները:

Կշռադատման փուլը կարելի է կազմակերպել քառաբաժան մեթոդով: Յուրաքանչյուր հատվածում կարվեն համապատասխան նշումներ կկարդան իրենց գրածները կմեկնաբանեն կբացատրեն , թե ինչ էին տեսնում , լսում , զգում կամ մտածում կարդալիս:

1.Ի՞նչ էի տեսնում	2. Ի՞նչ ձայներ էի լսում
3.Ի՞նչ էի զգում	4. Ի՞նչ էի մտածում

3 դասաժամին անդրադարձ կկատարեմ և կգնահատվեն աշակերտները:Նյութն ավելի լավ յուրացնելու համար աշակերտներին կհանձնարարեմ ընթերցել զուգահեռ խմբի աշխատանքը, ավելին իմանալու, համեմատելու կարողունակությունը զարգացնելու նպատակով:

Եզրակացություն

Ելնելով ընտրածս մեթոդից՝ դասապրոցեսին ներգրավված էին բոլոր աշակերտները։ Ակտիվ էին աշակերտներից տասնհինգը,միջին ակտիվություն ունեին յոթը, պասիվ էին երեք աշակերտ։ Առաջին դասաժամին այնքան էլ արդյունքները բարձր չէին քանի որ և՛ նյութը, և՛ մեթոդը այնքան յուրացված չէր աշակերտների կողմից։ Սակայն արդեն երկրորդ դասաժամից նկատելի եղավ երեխաների ներգրավվածությունը և խմբում աշխատելու աջակցելու,ապրումակցելու,կոլեկտիվ մշակույթ գիտակցելու և աշխատելու կարևորությունն էր։

Լսելով երկու դասաժամերը եկա այն եզրակացության, որ հասա իմ նպատակին և վերջնարդյունքներին։

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է։ Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է։ Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում։ Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ։ Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար։ Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները։

Կատարելով հետազոտությունը՝եկա հետևյալ եզրահանգմանը, որ

1. պետք է համագործակցային ուսուցման դասեր հաճախակի անցկացնել, որ աշակերտները ներգրավված լինեն դասապրոցեսին, քանի որ այն օգնում է աշակերտներին համագործակցել ուսուցման գործընթացին։
2. Համագործակցելով աշակերտները միասին են մտածում տվյալ հարցի շուրջ,յուրաքանչյուր աշակերտ սովորող լինելու հետ մեկտեղ դառնում է նաև սովորեցնող։

Իմ նպատակն էր հետազոտել և ուսումնասիրել համագործակցային ուսուցումը խմբայինաշխատանքում, որը ինձ հաջողեց և ես գոհ եմ արդյունքներից։

Համագործակցային ուսուցմամբ վարած դասաժամերին ես ստացա ինձ հուզող շատ հարցերի պատասխաններ և ակնկալվող արդյունքները: Ճիշտ է եղան որոշ թերություններ, սակայն ես հասա իմ նպատակին և վերջնարդյունքին:,Ես եկա այն համոզման, որ համակցված ուսուցումը խմբային մեթոդով նպաստում է աշակերտների ակտիվ մասնակցությունը դասին, նրանց մեջ զարգացնում ընկերասիրությունը,աշխատասիրությունը, հանդուրժողականությունը: Քանի որ ժամանակը սուղ էր, ես չկարողացա իմ հարցերի պատասխանները ամբողջությամբ ստանալ: Սակայն փորձը ցույց տվեց, որ եթե ուսուցիչը համագործակցային ուսուցմամբ խմբային աշխատանքներ հաճախակի կազմակերպի, ապա դասարանում միշտ կտիրի ընկերական մթնոլորտ: Իմ սպասելիքներն ու վերջնարդյունքները գոհացրեցին ինձ չնայած նրա ,որ այնքան էլ երկարատև և շատ չէին նմանատիպ դասերը. սակայն ունեցանք գոհացուցիչ արդյունք:

Օգտագործված գրականության ցանկ

1.<< Համագործակցային ուսուցում>> Երևան ձեռնարկ << Անտարես>> 2006

Հեղինակ՝ Ա. Հովհաննիսյան և այլք

2. << Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար >>.Գ.Մկրտչյան 2016թ.

3.Մեթոդական ձեռնարկ, <<Մանկավարժական

տեխնոլոգիաներ. համագործակցային տեխնոլոգի>>Селевко Г.К. Современные

образовательные технологии. — Народное образование, 1998. — 256 с

4. Խաչատրյան Ս. et al, (2020), Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ

Էբերտ հիմնադրամ

5.Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 5-6, ուսուցչի ձեռնարկ,Երևան , 2011

6.Վիքիպեդիա (ազատ հանրագիդարան): https://hy.wikipedia.org/wiki/